ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2025 թվականի №---Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի №635-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի նոյեմբերի 19-ի №635-Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված և 2023 թվականի նոյեմբերի 15-ի №396-Ա որոշմամբ երկարաձգված և նոր խմբագրությամբ շարադրված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) №0479 լիցենզիայի (այսուհետ՝ Լիցենզիա) պայմանների 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերությանը պարտավորեցվել է մինչև 2025 թվականի նոյեմբերի 19-ը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հետ նախապես համաձայնեցված բնակավայրերում՝ առնվազն 500 միլիոն դրամի կապիտալ ներդրումների իրականացմամբ զարգացնել կապի ենթակառուցվածքները: Նույն ենթակետի համաձայն սահմանված պարտավորության կատարումը Հանձնաժողովը գնահատում է Նախարարության համապատասխան տեղեկատվության և Հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված՝ անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացության արդյունքների հաշվառմամբ,

բ) Ընկերությունը 2025 թվականի հոկտեմբերի 20-ի №2521 գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ խնդրելով երկարաձգել վերը նշված պարտավորության կատարման ժամկետը՝ մինչև 2027 թվականի հուլիսի 1-ը, որպես Լիցենզիայով սահմանված

ժամկետում տվյալ պարտավորության կատարումն անիրատեսական լինելու գործոն նշելով պարտավորության կատարման շրջանակում Նախարարության հետ համապատասխան աշխատանքների իրականացման համաձայնեցման գործընթացն ավարտելու ժամկետը (2025 թվականի օգոստոսի 25-ը) և դրանով պայմանավորված աշխատանքների փուլային իրականացման ծավալն ու առանձնահատկությունը: Այս առնչությամբ Ընկերությունը ներկայացրել է նաև Նախարարության հետ համաձայեցված աշխատանքների նկարագիրն ու հիմնավորումները,

գ) Հանձնաժողովը 2025 թվականի հոկտեմբերի 21-ի №ՄՄ/34.2-Մ2-9/5851-2025 գրությամբ դիմել է Նախարարություն՝ Լիցենզիայի պայմանների 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պարտավորության կատարման անհնարինությունը Ընկերության կողմից նշված օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված լինելու և վերջինի գործողությունների հետևանք չլինելու, ինչպես նաև այդ կապակցությամբ տվյալ պարտավորության կատարումն Ընկերության կողմից հայցվող ժամկետով երկարաձգելու հիմնավորվածության վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով,

դ) Նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 7-ի №ՊՆ/510/13208-2025 գրությամբ հայտնել է, որ Լիցենզիայի պայմանների 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը սահմանված ժամկետներում հնարավոր չէ կատարել՝ հաշվի առնելով պաշտպանունակության ամրապնդմանն ու դրանց արդյունավետ կատարման ապահովմանն ուղղված աշխատանքների առանձնահատկությունները, ուստի համաձայն է նախատեսված պարտավորության կատարման ժամկետը մինչև 2027 թվականի հուլիսի 1-ը երկարաձգելու առաջարկությանը,

ե) Լիցենզիայի պայմանների 2-րդ կետի 2-րդ ենթակետի կատարման մասով Ընկերության և Նախարարության դիրքորոշումների արդյունքներով հաստատվել է տվյալ ենթակետով սահմանված պարտավորության կատարման անհնարինությունը Ընկերության կողմից նշված օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված լինելու և Ընկերության գործողությունների հետևանք չլինելու հանգամանքը, Հանձնաժողովը նպատակահարմար է համարում նշված ենթակետով սահմանված պարտավորության կատարման ժամկետը երկարաձգել Ընկերության կողմից հայցվող ժամկետով, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Լիցենզիայի պայմանների 2-րդ կետի 2-րդ ենթակետում «մինչև 2025 թվականի նոյեմբերի 19-ը» բառերը փոխարինել «մինչև 2027 թվականի հուլիսի 1-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից եռամսյակային պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը, Հանձնաժողով ներկայացնել Լիցենզիայի պայմանների 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պարտավորության կատարման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- --------- 2025թ.